ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
պետական ոչ առևտրային կազմակերպությունը աշխատանքի է հրավիրում

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ

Պարտականությունները.

- կատարելու է **ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն** գրավոր թարգմանություններ,
- մասնակցելու է եզրաբանական նյութերի, շտեմարանների, ձեռնարկների մշակման, արդիականացման և զարգացման աշխատանքներին:

Պահանջվող որակավորումը և հմտությունները.

- թարգմանչական գործի, լեզվաբանության, իրավագիտության կամ հարակից այլ բնագավառի բարձրագույն կրթություն,
- թարգմանչական գործունեության **3-5 տարվա** աշխատանքային փորձ,
- իրավական ակտերի թարգմանության բնագավառում փորձը կհամարվի առավելություն,
- **ռուսերենի և հայերենի գերազանց իմացությունը պարտադիր է,** անգլերեն լեզվի իմացությունը կհամարվի առավելություն,
- անգլերեն լեզվով թարգմանչական փորձը կհամարվի առավելություն,
- ՀՀ իրավական ակտերի թարգմանության բնագավառում փորձը կհամարվի առավելություն,
- թարգմանչական գործընթացին օժանդակող հատուկ համակարգչային ծրագրերի (օր. Trados և այլն) իմացությունը, դրանցից օգտվելու հմտությունները, ինչպես նաև համապատասխան սերտիֆիկացման առկայությունը կհամարվի առավելություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Աշխատավարձը՝ շուկայական:

Աշխատաժամանակը՝ լրիվ կամ կես դրույք, կամ արտահաստիքային հիմունքներով:

Թեստերին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. կենսագրական (резюме)՝ հայերենով կամ ռուսերենով,
2. բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
3. աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածք աշխատանքային գրքույկից,
4. երեք երաշխավորագրող անձանց տվյալները՝ անուն և ազգանուն, պաշտոն, կոնտակտային տվյալներ,
5. անձնագրի պատճենը,
6. սոցիալական քարտի պատճենը (առկայության դեպքում):

Փաստաթղթային փուլն անցած դիմորդները կմասնակցեն գրավոր թեստավորման (ռուսերենի իմացություն, ընդհանուր իրազեկություն, թարգմանչական հմտություններ), իսկ թեստավորման արդյունքում ամենաբարձր միավորներ ստացած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Փաստաթղթերի ընդունման **վերջին ժամկետն է՝ 10.12.2013թ.**:

Փաստաթղթերն ուղարկել **mzargaryan@translation-centre.am** էլեկտրոնային հասցեով կամ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ Հալաբյան 41ա հասցեով, ժամը 10:00-ից մինչև 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: